

գրութեան (Վաղարշապատ, 1893) յաւելուածում (էջ 286): Նրա թուագրումն է «Հայոց ԶԸ թուին», որն ուղղելի է «Տաճկաց ԶԸ թուին» (706 յունուար - 707 յունուար):

46 Պատմութիւն Ղեւոնդեայ, գլ. Ժ, էջ 23: Պատմիչը նաեւ մանրամասն գրում է Նախնաւանի ու Նրամի ողբերգութեանը նախորդած՝ քիզանդացիների եւ Վարդանակերտի յաղթանակից յետոյ Տայքի Թովարք գաւառում բնատրուած Սմբատ կիրոպաղատի գործերի՝ Հայաստանը վերագրուելու փորձի եւ ջախջախիչ պարտութեան մասին Վանանդի Դրաշպետ գիւղի մօտ, որից յետոյ Սմբատն իր հետ եղած իշխաններով հեռացաւ Եզրաց աշխարհի Փոյթ քաղաքը, ուր մնաց վեց տարի (էջ 37-40): Ըստ Արամ Տէր-Ղեւոնդեանի՝ վերջին պարտութեան մասին գրում է նաեւ Ժ դարի արաբ պատմիչ Քուֆին, իսկ Նախնաւանի ու Նրամի դէպքերը յիշատակում է նաեւ Նալիֆա իբն ալ-Նայեթը՝ թուագրելով, սակայն, Հիջրի 84 թուականով (703 թ.): Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն, հ. Բ, էջ 329:

47 Էջ 318-319: ՊԱ բոլոր ձեռագրերում այս թիւը ՄԾԳ է, սակայն ճիշտ ենք համարում Գ-Դ ամե-

նատարածուած տառաչփոթութեան եմթադրութեամբ վերականգնում տալ՝ «ՄԾԴ» (705 յունիսի 3 - 706 յունիսի 2), որն իր հաստատումն է գտնում բնագրի շարունակութեան մէջ. «Եւ ի միւսում ամի [=706/707] զԾիրակայ տէրն տարան յԱսորիս: Եւ յետ երկուց ամաց [=708/709] անց Մրուան Տաճկաց իշխանն ի Գելան (cr ցԱլան, Ե Լան, ի յԱղան) եւ ոչ կարաց մտանել: Եւ ել Նազրաց տէրն ութսուն հազար արամբք եւ առ (al էառ) զԱղուանս. եւ ՄԾԸ էր թիւն (bcir ի ՄԾԸ թուականին) [=709/710]:»:

48 Էջ 319-320: Համեմատական հրատարակութեան մէջ այս հատուածը իր շարունակութեան հետ միասին դարձուած է առանձին գլուխ (ԺԷ), որը յանգում է մեզ հասած a գրչագրից (ՄՄ, թիւ 1531) ընդօրինակուած մի ձեռագրախմբի (Աց), ուստի չի կարող ընդունելի համարուել:

49 Հ. Ներսէս Ակիճեան, Մովսէս Դասխարանցի, էջ 378:

ՏԱՇԻՐ-ՁՈՐԱԳԵՏԻ ԿԻՐԻԿԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԾԳՆԱԺԱՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Արտաշէս Շահնազարեան

Աւատատիրական յարաբերութիւնների խորացման հետեւանքով Բագրատունեաց Հայոց թագաւորութիւնը յատկապէս Ժ դ. երկրորդ կէսին քաղաքականապէս մասնատուեց, եւ առաջացան ծայրամասային մի շարք մանր թագաւորութիւններ: Դրանցից էր 960-970-ական թթ.¹ Սմբատ Բ-ի եղբայր Գուրգէնի (տեղական արտասանութեամբ՝ Կիւրիկէ) հիմնած Տաշիր-Ձորագետի Կիւրիկեան թագաւորութիւնը՝ Շամշուղէ կենտրոնով: Գուրգէնի որդի Դաւիթ Անհողինի օրօք (991-1050) իր հզօրութեան գագաթնակէտին հասած այս թագաւորութիւնը ներառում էր նաեւ Տաւուշ, Գարդման ու Փառխոսս գաւառները: Դաւիթ Անհողինի որդի Կիւրիկէ Ա-ի իշխանութեան երկրորդ շրջանում Տաշիր-Ձորագետի Կիւրիկեան թագաւորութիւնը սկսեց ճգնաժամ ապրելով աստիճանաբար թուլանալ՝ բռնելով անկման ուղին: Դրա պատճառները հիմնականում արտաքին էին՝ պայմանաւորուած սելջուկեան եւ վրացական գործօններով:

Չնայած սելջուկեան սուլթան Ալփասլանի (1063-1072) գլխաւորած 1064թ. արշաւանքի ժամանակ Կիւրիկէ Ա-ը, հնազանդութիւն յայտնելով եւ դստերը ճարահատեալ նրա մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքին կնութեան տալով, իր թագաւորութիւնը փրկեց աւերումից ու կործանումից, սակայն կորցրեց Շամշուղէն իր շրջակայքով: Բանն այն է, որ Ալփասլանի պահանջով Վրաց թագաւոր Բագրատ Դ-ը (1027-1072), խորամանկութեամբ Կիւրիկէ Ա-ին ձերբակալել տալով,

ստիպեց ոչ միայն դստերը կնութեան տալ Նիզամ ալ-Մուլքին, այլեւ իրեն զիջել Շամշուղէն, ինչպէս նաեւ Ուփիրեթ, Քորայր եւ Վարազաբար բերդերը²: Շատ չանցած Բագրատ Դ-ն այդ երեք բերդերը վերադարձրեց Կիւրիկէ Ա-ին, սակայն ռազմավարական խիստ կարեւոր նշանակութիւն ունեցող Շամշուղէն պահեց իրեն³: Ենթադրելի է, որ նա վերոյիշեալ բերդերը հետ տուեց սելջուկների ճնշման տակ: Ինչ վերաբերում է Շամշուղէին, ապա Կիւրիկէն ստիպուած էր հաշտուել դրա կորստեան հետ եւ իր թագաւորութեան կենտրոնը դարձնել Շամշուղէից հարաւ գտնուող Լոռէ բերդաքաղաքը: Ըստ Սամուէլ Անեցու՝ դա տեղի ունեցաւ 1065 թ.⁴: Սակայն Տաշիր-Ձորագետի Կիւրիկեան թագաւորութեան տարածքային կորուստները դրանով չսահմանափակուեցին: Վրացական աղբիւրների հաղորդումների համաձայն՝ նախքան 1069 թ. Գանձակի Շաղաղեանները Կիւրիկէ Ա-ից խլել էին Գագ եւ Գաւարզին (Քաւազին) բերդերը, որոնք Բագրատ Դ-ից պարտուելուց յետոյ զիջեցին նրան⁵: Չնայած Կիւրիկէ Ա-ը աշխատում էր չփչացնել յարաբերութիւնները Բագրատ Դ-ի հետ, ստիպուած էր մասնակցել վերջինիս դէմ 1068 թ. Ալփասլանի ձեռնարկած արշաւանքին, որի հետեւանքով Վրաց թագաւորը ստիպուած էր ընդունել սելջուկեան գերիշխանութիւնը⁶:

Երբ Ալփասլանի յաջորդ Մելիք-շահը (1072-1092) Գանձակի Շաղաղեան ամիրայութիւնը 1087 թ. վերացրեց, եւ այն-

տեղ իշխանութիւնն անցաւ սելջուկներին,⁷ ի դէմս վերջիններէս ճգնաժամ ապրող Տաշիր-Ձորագետի Կիւրիկեան թագաւորութիւնը մի նոր վտանգաւոր ախոյեան ունեցաւ: Նրանց եւ արագօրէն հզօրացող վրացական թագաւորութեան ոտնձգութիւնից զերծ մնալու միտումով պէտք է բացատրել 1080-ական թուականներին երկրորդ կէսին Կիւրիկէ Ա-ի այցելութիւնը Մելիք-շահին:⁸ Ինչպէս կարելի է մակաբերել Մելիք-շահին Կիւրիկէ Ա-ի այցելութեան մասին պատմող Սամուէլ Անեցու՝ «Ի սուլտանն չոգաւ եւ դարձաւ անդրէն դրուատով», եւ Վարդան վարդապետի՝ «դարձան պատուով» խօսքերից, նրան յաջողուել էր հաւանաբար սելջուկներին ենթարկուելու եւ հարկատուութեան պայմանով իր թագաւորութեան անվտանգութեան երաշխիքներ ստանալ: Սակայն Կիւրիկէ Ա-ի ջանքերն ապարդիւն էին, քանի որ այս փոքրիկ թագաւորութեան վրայ արտաքին ճնշումը զնալով ուժեղանում էր: Աղբիւրներում վերջին անգամ 1089 թ. յիշատակուող Կիւրիկէ Ա-ին յաջորդեցին որդիները՝ Աբասն ու Դաւիթը: Կիւրիկէի միւս որդին՝ Ստեփաննոսը, հոգեւորական էր: Ինչպէս երեւում է Վարդան վարդապետի՝ «իշխանութիւն Հայոց Կիւրիկէի եւ Աբասայ»⁹ արտայայտութիւնից, գահերէցն Աբասն էր: Դա երեւում է նաեւ մի այլ առիթով երկու եղբայրներին յիշատակելիս նոյն հեղինակի «Աբաս եւ Դաւիթ նեղեալ» արտայայտութեան մէջ Աբասին առաջինը յիշատակելուց, չնայած պատմիչը մէկ անգամ էլ Դաւիթին է առաջինը յիշատակում:¹⁰ Չնայած Կիրակոս Գանձակեցին եղբայրներին հակառակ յաջորդականութեամբ է թուարկում,¹¹ մեր ենթադրութեան օգտին է խօսում եւ այն հանգամանքը, որ, ինչպէս քիչ անց կը տեսնենք, 1139 թ. Աղուանից կաթողիկոսի

ընտրութիւնը կատարուեց ոչ թէ Դաւիթին պատկանող Մածնաբերդում, այլ նրանից ոչ հեռու գտնուող եւ Աբասին ենթարկուող Տաւուշում, ուր եկել էր նաեւ Դաւիթը:

Երկու եղբայրների գահակալութեան ժամանակաշրջանում Տաշիր-Ձորագետի թագաւորութիւնը հաստատուն բռնեց անկման ուղին: Այսպէս, սելջուկեան պետութիւնում ծաւալուած գահակալական կռիւների ժամանակ, օգտուելով անիշխանութիւնից, խզիլ անունով մի սելջուկ ամիրա 1105 թ. արշաւեց դէպի Լոռի: Եթէ, ըստ Վարդան վարդապետի, նա գրաւեց միայն Լոռէն¹², ապա համաձայն Կիրակոս Գանձակեցու՝ նաեւ Սանահնի ու Հաղբատի վանքերը¹³: Իրապատում է Կիրակոս Գանձակեցին, քանի որ նրան կրկնորդում է Մխիթար Այրիվանեցին յայտնելով, որ խզիլ ամիրան հրդեհել էր ինչպէս Լոռէն, այնպէս էլ Սանահնի ու Հաղբատի վանքերը¹⁴: Հասկանալի է, որ հրկիզուել էին դրանց միայն փայտաշէն մասերը: Մնում է եզրակացնել, որ խզիլը, Լոռին գրաւելու մտադրութիւն չունենալով, բաւարարուել էր կողոպուտով ու հրկիզումով եւ հեռացել: Այս պնդման օգտին է խօսում հինգ տարի անց՝ 1110 թ. օգոստոսին, սելջուկեան մի հրոսակախմբի կողմից Դաւիթ Կիւրիկեանի ներկայութեամբ արարողութեան ժամանակ Սանահնի վանքի ասպատակումն ու միաբաններից երկուսին սպանելով հեռանալը¹⁵: Այս անցքերը վկայում են Տաշիր-Ձորագետի թագաւորութեան աննախանձելի վիճակի մասին ժԲ դարի առաջին տասնամեակում: Յաջորդ տասնամեակում Կիւրիկեան թագաւորութեան նկատմամբ սելջուկեան ճնշման ուժգնութեան խորացման մասին է վկայում ենթադրաբար ժԲ դարում ապրած¹⁶ Անանուն ժամանակագիրը: Անդրադառնալով Կիւրիկէ Ա-ից յետոյ նրա տի-

րոյթներում ստեղծուած իրավիճակին՝ ժամանակագիրը նկատել է. «Իսկ յետ Կիւրիկէի սուղ ժամանակի ի վերայ անցելոյ մերժին որդիքն նորա ի հայրենեաց իւրեանց, օր ըստ օրէ նուագութեան հասանելոյ, եւ տիրեն սուղ ինչ ժամանակս Ակիւթացիք (սելջուկները - Ա. Շ.) Տաշիրայ»¹⁷: Ինչպէս ստորեւ կը տեսնենք, Անանուն ժամանակագիրը Տաշիր ասելով նկատի է ունեցել Կիւրիկեան եղբայրների բոլոր տիրոյթները: Սելջուկները դրանց, այսինքն՝ Տաշիր-Ձորագետի թագաւորութեանը լիովին տիրեցին 1113 թ.¹⁸: Կիւրիկեանների պատմութեամբ առաւել հետեւողական զբաղուած Ռ. Մաթեւոսեանը, հաշուի առնելով Ստեփաննոս եպիսկոպոսի թուագրութիւնը եւ ճիշտ չընկալելով Մխիթար Այրիվանեցու ժամանակագրական համակարգի սկզբունքը՝ իրադարձութիւնները յիշատակել հերթականութեամբ, բայց ոչ թէ առանձին տարեթուերով, այլ տարիների որոշակի կտրուածքով, կարծել է, թէ ըստ այդ ժամանակագրի, Աբասն ու Դաւիթը հայրենիքից վտարուել են 1111 թ.: Ելնելով դրանից՝ նա այդ իրադարձութիւնը թուագրել է 1111-1113-ի միջակայքով¹⁹: Մինչդեռ, Մխիթար Այրիվանեցու ժամանակագրական սանդղակի համաձայն, դա կատարուել է 1111-1121 թթ. արանքում եւ այդ ընթացքում նրա յիշատակած անցքերից երրորդն է: Եթէ ժամանակագիրը դրանք թուարկել է ըստ կայացման տարիների, ապա նրա, Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Անանուն ժամանակագրի մատնանշած թուականները նոյնական են: Հետեւաբար, սելջուկների կողմից Կիւրիկեան եղբայրների օտարուելը թուագրուած է 1113-ով:

Կիրակոս Գանձակեցին ու նրա սննդակից Վարդան վարդապետն իրենց հայրենիքից Աբասի ու Դաւիթի հեռանալու պատճառները փնտրում են ոչ թէ

սելջուկեան, այլ վրացական գործօնի մէջ: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ նրանք այդ քայլին դիմել են «դաւեալք ի վրաց»²⁰, իսկ համաձայն Վարդան վարդապետի՝ «նեղեալ ի վրաց»²¹: Այսպիսով, այս վկայութիւնները հակադրում են այդ իրադարձութեանը ժամանակի առումով աւելի մօտ կանգնած ժԲ դարի Անանուն ժամանակագրի վերը բերուած հաղորդմանը: Բնականաբար, հարց է ծագում, թէ ինչու պէտք է 1110 թ. Շամշուղէն ու նրա շրջակայ բերդերն իր գլխաւոր հակառակորդ Գանձակի սելջուկեան ամիրայութիւնից խլած²² վրաց թագաւոր Դաւիթ Դ Շինարարը (1089-1125) ձգտէր Լոռիից Կիւրիկեանների հեռանալուն: Չէ՞ որ նման պարագայում Լոռին սելջուկները կը ռազմակալէին, Վրաստանին առաւել խոցելի կողմից սպառնացող սելջուկեան վտանգն աւելի իրական կը դառնար: Հետեւաբար Աբասին ու Դաւիթին Լոռուց օտարել էին սելջուկները: Շամշուղէն ու նրա շրջակայ բերդերը, հարկադրուած վրացիներին զիջելով, Գանձակի սելջուկեան ամիրայութիւնն իր վասալ Կիւրիկեան եղբայրներին նրանց վերջին տիրոյթից՝ Լոռուց, հեռացնելով, ռազմակալեց այն, որպէսզի արդիւնաւէտ հակազդէ դէպի Տաշիր-Ձորագետի թագաւորութեան տարածք վրացական առաջխաղացմանը: Դա երեւում է հէնց Վարդան վարդապետի եւ Կիրակոս Գանձակեցու հաղորդումներից: Վարդան վարդապետի համաձայն՝ «Աբասն եւ Դաւիթ ... չոգան առ տեարսն Ռանայ, եւ առին մէն մի բերդս, եւ կային տառապանօք»²³: Իր սննդակցի ասածն է պնդել Կիրակոս Գանձակեցին՝ գրելով հետեւեալը. «Գնացին ի պարսիկս Դաւիթ եւ Աբաս, եւ առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն Տաւուշ եւ զՄածնաբերդ եւ զայլ տեղիս»²⁴: Այս վկայակոչումներից (յատկապէս՝ Կիրակոս

Գանձակեցուց արուած) հետեւում է, որ սելջուկները նախքան այդ Կիւրիկեաններէն իսկ էին Տաւուշն ու Մաժնաբերդը եւ «այլ տեղիս», իսկ այժմ, իբրեւ իրենց ենթակաների, Աբասին ու Դաւթին Լոռու փոխարէն «ի ժառանգութիւն», այսինքն, հայրենատիրութեան իրաւունքով տալիս էին Մաժնաբերդը եւ Տաւուշ բերդերը: Ըստ որում, աւելի հզօր ու նշանաւոր Տաւուշը յանձնուել էր աւագին՝ Աբասին, իսկ Մաժնաբերդը՝ Դաւթին: Կիրակոս Գանձակեցու եւ Վարդան վարդապետի օգտագործած «առնել» բառի իմաստը տառացի ընկալելով՝ Ռ. Մաթեոսեանը հակադրուել է Ղ. Մովսէսեանին²⁵ եւ պնդել, թէ իբր Կիւրիկեան եղբայրներն այդ բերդերը սելջուկներէն ուժով են խլել, քանի որ նրանք «հազիւ թէ վտարանդի եղբայրներին բերդեր զիջէին»²⁶: Սակայն նախ՝ արդէն տեսանք, որ սելջուկներն իրենք էին Կիւրիկեան եղբայրներին Լոռիից վտարանդի դարձրել եւ փոխառէնը Տաւուշ գաւառում այդ բերդերը տուել, եւ երկրորդ՝ եթէ Աբասն ու Դաւթը Գանձակի սելջուկեան ամիրայութիւնից բերդեր խլելու ուժ ունենային, ապա ինչո՞ւ պէտք է Լոռին սելջուկներին զիջէին:

Աբասի եւ Դաւթի փոքրիկ տիրոջներն ընդգրկում էին համապատասխանաբար Տաւուշ եւ Ախնջի գետերի աւազանները: Տաւուշ բերդը գտնուել է Բերդքաղաքի արեւելակողմեան մերձակայքում, իսկ Մաժնաբերդը նոյնական է Տաւուշի մարզի Այգեձոր գիւղից 2,5 կմ հիւսիս ընկած եւ Ղըզղալա (Աղջկաբերդ) անունանուող բերդի հետ: Վարդան վարդապետի «եւ կային տառապանօք» խօսքերից հետեւում է, որ Կիւրիկեան եղբայրները շարունակ ենթարկուում էին սելջուկների բռնութիւններին:

Սակայն սելջուկներին այդպէս էլ

չյաջողուեց ամրապնդուել ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Լոռու: Իր թագաւորութեան հարաւային սահմաններն ամրապնդելու, յանձինս Լոռու հակասելջուկեան յաջող ձեռնարկումների ամուր յենակէտ ստեղծելու եւ իրենց նախկին տիրոջների նկատմամբ Կիւրիկեանների շառաւիղների հնարաւոր նկրտումներին վերջ տալու նկատառումներով Դաւթ Դ Շինարարը Լոռին 1118-1124 թթ. միջակայքում գրաւելով միացրեց իր թագաւորութեանը²⁷ եւ յանձնեց Օրբէլիների հզօր տոհմին: Այդ մասին պատմող Վարդան վարդապետն ու Ստեփաննոս Օրբէլեանը Դաւթ Դ Շինարարի գրաւած բերդերի թւում յիշատակում են նաեւ Տաւուշը²⁸, ինչը չի համապատասխանում իրականութեանը: Այդ են վկայում Մխիթար Գօշը եւ Տաւուշ բերդի Ս. Աստուածածին եկեղեցու մուտքի համեմատաբար վերջերս յայտնաբերուած բարաւորի արձանագրութիւնը: Մխիթար Գօշն, անդրադառնալով 1139 թ. Գրիգոր վարդապետին Աղուանից կաթողիկոս ընտրելու հետ կապուած դէպքերին, գրում է. «Արդ ի գալ տէր Սահակայ յաշխարհս Աղուանից, ժողովէր զամենեսեան առ հասարակ ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունւոյ՝ որդւոյ Կիւրիկէի արքայի, որ եւ ժողովեալ ամենեցուն առաջի նորա ի բերդն, որ կոչի Տաւուշ»²⁹: Տաւուշ բերդի Ս. Աստուածածին եկեղեցու մուտքի բարաւորի վերոյիշեալ արձանագրութեան համաձայն՝ Աբասն իր եւ եղբոր՝ Դաւթի հոգու յիշատակին նորոգել է 1139 թ. մարտի 17/18-ին տեղի ունեցած Գանձակի երկրաշարժի հետեւանքով աւերուած այդ եկեղեցին³⁰: Հետեւաբար Կիրակոս Գանձակեցու՝ «Ապա յետ աւուրց առնուն դարձեալ պարսիկք ի նոցանէ (Կիւրիկեան եղբայրներից - Ա. Շ.) զՏաւուշ»³¹ արտայայտութիւնը

չպէտք է բառացի հասկանալ: Տաւուշը սելջուկներին անցաւ 1145 թ.՝ Չոլի ամիրայի կողմից գրաւուելուց յետոյ, ինչպէս վկայում է Մխիթար Գօշը՝ գրելով հետեւեալը. «Ապա ... գայր (Չոլի ամիրան - Ա. Շ) ի գաւառս Առանայ: Եւ փութանակի երթայր ի բերդն Տաւուշ, յորում ամրացեալ էր թագաւորն Աբաս եւ բազում ջանիւ ընդերկար պաշարեալ զնա՝ ապա առնոյր զբերդն. իսկ Աբաս անցեալ գնաց առ թագաւորն վրաց ի ՇՂԴ (1145 - Ա. Շ) թուականին»³²: Սամուէլ Անեցին իր հերթին յայտնում է, որ 1145 թ. Չոլի ամիրան 40-օրեայ պաշարումից յետոյ գրաւել է Տաւուշը՝ «հանելով զթագաւորն Աբաս առանց վնաս առնելոյ»³³: Այսպիսով, Կիւրիկեանները զրկուեցին եւս մի տիրոջից: Աբասն իր հայր Կիւրիկէ Բ-ի հետ յիշատակուել է Ղըզղալա կոչուող բերդատեղի մերձակայքում՝ Ախնջի գետի ձախ ափին ընկած կոտրուած մի խաչքարի եղծուած արձանագրութիւնում: Խաչքարն այժմ տեղում չէ եւ գիտութեանը յայտնի է միայն Մ. Բարխուտարեանցի պակասաւոր ընթերցմամբ: Դրանում խօսուում է ոմն տէր Յովհաննէսի կողմից աւագանի կառուցման մասին³⁴:

Եթէ ըստ Մխիթար Գօշի՝ դրանից յետոյ Աբասը նոյն 1145 թ. «անցեալ գնաց առ թագաւորն Վրաց»³⁵, ապա Կիրակոս Գանձակեցու համաձայն՝ ապաստանեց Մաժնաբերդում՝ Դաւթ եղբոր մօտ³⁶: 1145 թ., այսինքն՝ Տաւուշի գրաւման տարում, Դաւթի մահը³⁷ ենթադրել է տալիս, որ Աբասը նախ ապաւինել է եղբորը, իսկ նրա վախճանուելուց յետոյ գնացել վրաց այդ ժամանակուայ թագաւոր Դեմետրէ Ա-ի (1125-1155) մօտ՝ թերեւս յուսալով նրա օգնութեամբ յետ ստանալ Տաւուշը: Մեր ենթադրութեան օգտին է խօսում այն հանգամանքը, որ նման յոյ-

սեր ունէր, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Կիւրիկեանների մի այլ շառաւիղ եւս: Սակայն Աբասի յոյսերին վիճակուած չէր իրականանալ: Նա մահացաւ անժառանգ եւ Դաւթ եղբոր հետ ամփոփուած է Հաղբատում՝ Կիւրիկեանների տոհմական տապանատանը³⁸: Ինչ վերաբերում է նրանց եղբայր Ստեփաննոս եպիսկոպոսին, ապա նա վախճանուել էր աւելի վաղ՝ 1143 թ. Ղալնճաքար բերդում:³⁹ Տաւուշը՝ սելջուկների ձեռքում մնաց մինչեւ 1203 թ. Վահրամեանների կողմից ազատագրուելը⁴⁰: Ինչպէս երեւում է Գրիգոր Ակնեցու մի արտայայտութիւնից, սելջուկները Աբասի տիրոջները վերածել էին մի փոքրիկ սուլթանութեան՝ Տաւուշ կենտրոնով⁴¹:

Դաւթին յաջորդեց որդին՝ Կիւրիկէ Բ-ը (1145-1170), որի մասին կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել⁴²: Կիրակոս Գանձակեցին նրան բնութագրում իբրեւ բարքով բարի եւ գործերում հօրից կատարեալ անձնաւորութեան⁴³: Ըստ երեւոյթին նա վրաց Բագրատունիներից իր նախնիների տիրոջները յետ ստանալու ակնկալիքներ ունէր, ինչը յայտնի էր Դաւթ Ե (իշխել է 1155 թ. ընդամէնը վեց ամիս) թագաւորին: Խօսելով իրեն ենթակայ Հայ իշխանների նկատմամբ Դաւթ Ե-ի բարեհաճ վերաբերմունքի մասին՝ Մխիթար Գօշը յաւելում է. «Այնքան բարեմտութիւն ցուցանէր, մինչ զի առաքէր եւ կոչէր զթագաւորն Կիւրիկէ՝ որդի Դաւթի թագաւորի Բագրատունւոյ եւ խոստանայր նորա դարձուցանել ի նա զժառանգութիւն նորա, զոր նախնեացն իւրոց հանեալ էր ի նոցանէ. եւ այնպէս պարգեւաւք յղարկէր զնա ժամադիր եղեալ նմա»⁴⁴: Դաւթ Ե-ը դրանով նպատակ ունէր թուլացնել վրաց կենտրոնական իշխանութեան համար վտանգաւոր չափերով հզօրացած Օրբէլիների իշխա-

նական տունը⁴⁵: Սակայն նա հանդիպեց Օրբելիների կտրուկ հակադրեցութեանը: Նրանք թունաւորելով սպանեցին Դաւիթ Ե-ին⁴⁶, եւ, բացի այդ Լոռուն տիրելուն օրինականութիւն հաղորդելու եւ դրանկատմամբ Կիւրիկեանների յաւակնութիւնները չէզոքացնելու կամ գոնէ նուազեցնելու միտումով խնամիացան, ճիշտ է, թուլացած ու անկարող, բայց անվերապա հօրէն հայ Բագրատունիների իրաւաւորը ու Տաշիր-Չորագետի օրինական տէր համարուող Կիւրիկեան արքայատոհմի հետ:

Կիւրիկէ Բ-ը աղբիւրներին շատ քիչ է յայտնի: Այգեձոր գիւղի մերձակայքում գտնուած մի խաչքարի արձանագրութեան համաձայն՝ ոմն Խոցադեղ նրա թոյլտուութեամբ իր այգին վաճառել է⁴⁷: Նրա կնոջ անունը եղել է Թամար⁴⁸ եւ ունեցել են մէկ որդի, հինգ դուստր: Կ. Ղաֆաղարեանը եւ նրա հետեւութեամբ Ռ. Մաթեոսեանը Կիւրիկէ Բ-ի որդի են համարել նաեւ Տաւուշ գաւառում՝ Հախում գետի աւազանում, գտնուած Նոր Բերդի Կիւրիկեան իշխանութեան իշխան Վասակին⁴⁹, ինչը ստորեւ կը փորձենք վիճարկել: Կիւրիկէ Բ-ի աղջիկները՝ Մարիամը, Մամքանը, Ռուսուդանը, Բորինան եւ Վանենին յայտնի են Սանահնում, Հաղբատում, Մորո Չորո վանքում, Քոբայրում եւ այլուր ծաւալած բեղուն շինարարական գործունէութեամբ: Մամքանը Խաչէնի յայտնի իշխան Հասանի, իսկ Ռուսուդանը վրաց ամիրսպասալար Իւանէ Օրբելու կինն էր: Կիրակոս Գանձակեցու խօսքերով ասած՝ Կիւրիկէ Բ-ը «բարուք փոխեալ յաշխարհէս⁵⁰» 1170 թ. Մաժնաբերդում եւ թաղուեց Հաղբատում՝ Կիւրիկեանների տոհմական տապանատանը⁵¹:

Կիւրիկէ Բ-ին 1170 թ. փոխարինել է միակ որդին՝ 12-ամեայ Աբասը, որն ա-

մուսնացել է Հայոց եւ Վրաց ամիրսպասալար մեծ Սարգիս Չաքարեանի դուստր Նանայի (Վանենի) հետ: Ամուսնութիւնից երկու տարի անց նա 19-ամեայ հասակում 1176 թ. վախճանուել է, առանց կնոջից ժառանգ ունենալու: Նրա քոյր Բորինան, լսելով, որ եղբայրն ապօրինի կաթնակեր զաւակ ունի, նրան մօրից վերցնելով եւ Աղսարթան անուանակոչելով սնուցում է՝ դարձնելով չափահաս: Նոր Բերդի իշխան Դաւիթը Մաժնաբերդին տիրանալու նպատակով դատերն ամուսնացնում է Աղսարթանի հետ, ապա, այդ բերդին տիրանալով, աղջկան բաժանում է փեսայից: Սակայն Աղսարթանն իր կողմն է գրաւում մաժնաբերդցիներին, որոնք, Դաւիթին յանկարծակիի բերելով, բռնում են եւ ընտանիքով արտաքսում բերդից՝ այն յանձնելով օրինական տիրուղը⁵²:

Մաժնաբերդին խարդաւանքով տիրանալու անյաջող փորձ կատարած այս Դաւիթը Նոր Վարագի իր կառուցած Անապատ եկեղեցու եւ տապանատան արձանագրութիւններում հանդէս է գալիս իբրեւ «Դաւիթ, որդի Վասակայ, թոռն Կիւրիկէ արքայի»⁵³: Հէնց այս հանգամանքն է Կ. Ղաֆաղարեանին եւ նրա հետեւութեամբ Ռ. Մաթեոսեանին հիմք տուել կարծելու, որ Կիւրիկէ Բ-ը նաեւ Վասակ անունով որդի է ունեցել: Վերջինիս համարելով Կիւրիկեանների Նոր Բերդի ճիւղի հիմնադիրը՝ Կ. Ղաֆաղարեանը եզրակացրել է, որ նա Աբասից շուտ է մեռել, ուստի չի ժառանգել նրա գահը⁵⁴: Սակայն բանն այն է, որ այս Վասակի թոռ Վասակն իր հերթին Հոռոմոսի արձանագրութիւններից մէկում ներկայանում է իբրեւ «որդի Դաւիթ, թոռն Կիւրիկէի արքայի»⁵⁵: Նոր Վարագի իր կառուցած Ս. Աստուածածին եկեղեցու արձանագրութիւններից մէկում

եւս նա վկայում է որպէս Վասակ՝ որդի Դաւիթի, թոռն Կիւրիկէ արքայի, իսկ մի այլում հանդէս է գալիս իբրեւ «Վասակ՝ որդի Դաւիթի, որդո Վասակա, ի տանէ Բագրատունի, ի տոհմէ Դաւթա մարգարէի»⁵⁶: Այսպիսով, Դաւիթի որդի Վասակը եւս հօր նման երկու արձանագրութիւններում ներկայանում կամ վկայում է իբրեւ Կիւրիկէ արքայի թոռ: Սրանից հետեւում է, որ այդ վիճաբերում թոռն բառն օգտագործուել է իր երկու իմաստներից՝ զաւակի զաւակ եւ զարմ, սերունդ, երկրորդով⁵⁷, ինչը աղբիւրներում յաճախ է հանդիպում: Անկասկած թոռն բառը զարմ, սերունդ իմաստով է գործածել նաեւ նրա հայր Դաւիթը, որի «յազգէ Բագրատունեաց» լինելը նրա որդի Վասակի նման վկայում է նաեւ Կիրակոս Գանձակեցին⁵⁸: Այս Վասակին թագաւորագն, այսինքն՝ Բագրատունի է համարել նաեւ Վարդան վարդապետը⁵⁹: Եւ, վերջապէս, եթէ Նոր Բերդի իշխանութեան հիմնադիր Վասակի որդի Դաւիթը՝ Կիւրիկէ Բ-ի թոռը, այսինքն՝ Աբասի եղբորորդին լինէր եւ, ինչպէս տեսանք, նրան հասակակից տղայ ունենար, ապա Աբասի եւ հետեւաբար Դաւիթի հայր Վասակի քոյր Բորինան Աբասի մահից յետոյ ինչո՞ւ պէտք է սգար իր տոհմի մարելը, ինչը վկայում է Կիրակոս Գանձակեցին՝ գրելով հետեւեալը. «Իբրեւ ետես քոյր նորա (Աբասի - Ա. Շ) Բալրինա (պէտք է լինի Բորինա - Ա. Շ), եթէ բնաջինջ լինին յազգէն՝ անհնարին սգով վարանէր»⁶⁰:

Հետեւաբար, Նոր Բերդի իշխանութեան հիմնադիր Վասակը, Կիւրիկեաններից սերուած լինելով հանդերձ, Կիւրիկէ Բ-ի որդին եւ Աբասի եղբայրը չէ: Վասակի որդու Դաւիթ անունը, ինչպէս նաեւ նրա ու Աբասի որդու սերնդային տարբերութիւնը ենթադրել է տալիս, որ Վասակը եղել է Կիւրիկէ Ա-ի որդի Դա-

ւիթ Բ-ի տղան: Իբրեւ մեր վարկածի հիմք է եւ այն հանգամանքը, որ Հաղբատում Կիւրիկեանների տոհմական տապանատանն ամփոփուած որոշ անձնաւորութիւններ որեւէ այլ աղբիւրում վկայուած չեն, ինչը չի բացառում նրանց՝ այդ տոհմի անդամ լինելը: Մեր պնդման օգտին է խօսում նաեւ այն հանգամանքը, որ սելջուկները Դաւիթին եւ նրա անժառանգ Աբաս եղբորը, Մաժնաբերդից ու Տաւուշից բացի, ժառանգութիւն են տուել «եւ զայլ տեղիս»⁶¹: «Չայլ տեղիս» ասելով՝ պատմիչը կարող էր նկատի ունենալ Նոր Բերդը եւս, որն աղբիւրներում առաջին անգամ յիշատակուում է սելջուկներից 1124 թ. Դաւիթ Շինարարի գրաւած բերդերի շարքում, իսկ երկրորդ անգամ՝ 1128 թ., դրա մերձակայքում Դեմետրէ Ա-ի կողմից Գանձակի սելջուկեան աթաբեկ Ղարա-Սոնկուրին ջախջախելու կապակցութեամբ⁶²: Չնայած Տաւուշի մարզի Վարագաւան գիւղից 2 կմ արեւմուտք գտնուող Նոր Վարագայ վանական համալիրը, Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, գտնուել է «հուպ ի Նոր բերդն»⁶³, այդ բերդի ստոյգ տեղատեղայ ունենար, ապա Աբասի եւ հետեւաբար Դաւիթի հայր Վասակի քոյր Բորինան Աբասի մահից յետոյ ինչո՞ւ պէտք է սգար իր տոհմի մարելը, ինչը վկայում է Կիրակոս Գանձակեցին՝ գրելով հետեւեալը. «Իբրեւ ետես քոյր նորա (Աբասի - Ա. Շ) Բալրինա (պէտք է լինի Բորինա - Ա. Շ), եթէ բնաջինջ լինին յազգէն՝ անհնարին սգով վարանէր»⁶⁰:

Հետեւաբար, Նոր Բերդի իշխանութեան հիմնադիր Վասակը, Կիւրիկեաններից սերուած լինելով հանդերձ, Կիւրիկէ Բ-ի որդին եւ Աբասի եղբայրը չէ: Վասակի որդու Դաւիթ անունը, ինչպէս նաեւ նրա ու Աբասի որդու սերնդային տարբերութիւնը ենթադրել է տալիս, որ Վասակը եղել է Կիւրիկէ Ա-ի որդի Դա-

թեան տակ: Այնուհետեւ այն 1203 թ. Զաքարեանների ճիւղ Վահրամեանների ազատագրած Աբասի նախկին տիրոջթաների (Տաւուշ բերդ կենտրոնով) եւ Մաժնաբերդի իշխանութեան հետ միասին ամբողջ Տաւուշ գաւառի կազմում մտաւ Վահրամեանների հզօր իշխանութեան մէջ:

Ղ. Մովսէսեանն իր հերթին, անդրադառնալով Նոր Բերդի Կիւրիկեան իշխանների ծագումնաբանութեանը⁶⁵, այդ իշխանութեան հիմնադիր Վասակի որդի Դաւթին ենթադրաբար նոյնացրել է ԺԱ դարի սկզբին Գարդմանում հաստատուած եւ Կիւրիկեանների հետ խնամիացած ծանարների թագաւոր Դաւթի հետ⁶⁶: Սակայն այդ նոյնացումն անընդունելի է թէկուզ այն պատճառով, որ Կիւրիկեանների հետ խնամիական կապն այդ տոհմին պատկանելու հիմք չէր կարող ծառայեցուել: Մինչդեռ, ինչպէս տեսանք, Նոր Բերդի Կիւրիկեանները Բագրատունի համարուելու համար ունէին համապատասխան հիմքեր:

Աղսարթանի մասին եւս աղբիւրներում կցկտուր տեղեկութիւններ են պահպանուել: Խորանաշատի վանքի Ս. Աստուածածին եկեղեցու արեւմտեան մուտքից վերեւ գտնուող 1246 թուակիր արձանագրութեան շահեկան քննութեամբ Ս. Աւագեանն ապացուցել է, որ Աղսարթանի կինը եղել է ոմն Զալալի քոյր Բորինան⁶⁷: Դրանից հետեւում է, որ նա ամուսնացել է երկրորդ անգամ, քանի որ Նոր Բերդի իշխան Դաւիթը միայն Վասակ անունով որդի ունէր: Իբրեւ Բագրատունիների շառաւիղ՝ Աղսարթանը մեծ հեղինակութիւն է վայելել: Դրա վկայութիւնն է Նորավանքի Ս. Նշանի շուրջ առաջացած վէճը հարթելու համար 1216 թ. Դուինում Իւանէ աթաբեկ Զաքարեանի հրաւիրած ատեանին մի շարք աշխարհիկ

ու հոգեւոր խիստ նշանաւոր դէմքերի, այդ թւում՝ իր անմիջական գերակայ Վահրամ Գագեցու հետ նրա մասնակցութիւնը: Ճիշտ է, այդ մասին պատմող Ստեփաննոս Օրբէլեանն Աղսարթանին ոչ թէ յանուանէ, այլ «Մաժնաբերդեցի յորջորջմամբ է յիշատակում»⁶⁸, սակայն կասկածից վեր է, որ նման հեղինակաւոր ու կարեւոր ատեանին կը մասնակցէր 40-ամեայ Աղսարթանը եւ ոչ թէ նրա դեռահաս ժառանգորդ Կիւրիկէն:

Մաժնաբերդի Կիւրիկեանների պատմութեան այս շրջանի վրայ զգալի լոյս կարող էին սփռել Ղըզղալայից 150 մ հիւսիս-արեւելք ընկած մի փառահեղ ու խոշոր, սակայն, ցաւօք, այժմ մանրատուած խաչքարի արձանագրութիւնները, որոնց մէջ յիշատակուած են Կիւրիկեան տոհմին իւրայատուկ Աբաս, Աղսարթան, Կիւրիկէ ու Բորինա անունները: Ցաւօք, դրանք խիստ եղծուած են յատկապէս պատմագիտական արժէք ներկայացնող հատուածներում: Անընթեռնելի է նաեւ խաչքարի թիկունքի արձանագրութեան թուականը: Պահպանուել է միայն միաւորը՝ Ե (5), որին հետեւում է Աղսարթան անունը: Ապա պատմւում է, որ այս արձանագրութեան հեղինակը եղբօրը կորցնելուց յետոյ ինչ-որ մէկի սնուցել է իբրեւ որդու, որը 15 ամեայ տարիքում մահացել է եւ խաչքարն էլ կանգնեցուել է նրա յիշատակին: Խաչքարի երեսին կարդում ենք. «Յ(իսու)ս ողորմեայ... Աբասայ» բառերը, որոնց հետեւում է հետեւեալը. «... եւ առի զխաչս գնացի առաջի Արարչին թերեւս ողորմեսցի բարեխօսութեամբ սրբո Նշանին... Ք(րիստո)ս (աղ)աչեմ... (ծն)ողս կիսակենդան եւ զաւագ եղբայր իմ Կիւրիկէ կապոտ տեսա նորա ի ժամ մահու իւր եւ ոչ եղեւ: Եւ հարսն Բաւրինա...»⁶⁹: Առաջին արձանագրութեան մէջ յիշատակուած Աբասի

Կիւրիկեան լինելն աներկբայ է Հաղբատայ Ս. Նշանի բարեխօսութեանն արձանագրութեան հեղինակին դիմելուց: Բայց դժուար է ասել, թէ Կիւրիկեանների տոհմածառում այս խաչքարի վրայ յիշատակուած մարդիկ կոնկրետ որտե՞ղ են գտնուում⁷⁰:

Աղսարթանը եղել է աստուածապաշտ ու քահանայասէր անձնաւորութիւն եւ առաջացած տարիքում տառապել է յօղացաւից⁷¹: Թերեւս աստուածապաշտութիւնն ու առողջական վիճակի վատթարացումն են նրան դրդել «յետ ժամանակաց կենդանութեամբ իւրով ետ զիշխանութիւնն յորդին իւր Կիւրիկէ»⁷² եւ կրօնաւորել Գետակիցք կոչուող վանքում:

1236 թ. Վահրամեանների իշխանութեան կազմում Նոր Բերդի իշխանութեան նման Մաժնաբերդինը եւս գրաւուեց մոնղոլների կողմից: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ այդ ժամանակ Մաժնաբերդում իշխում էր Աղսարթանի որդի Կիւրիկէն, իսկ Վարդան վարդապետի պնդմամբ՝ Աղսարթանը⁷³: Նկատի առնելով Աղսարթանի 60 ամեայ տարիքը՝ առողջական վիճակը, կենդանութեան օրօք իշխանութիւնը որդուն յաճնելով կրօնաւորելը եւ նրա կենսագրութեան մանրամասերին Կիրակոս Գանձակեցու իրազեկութիւնը, կարծում ենք, որ Վարդան վարդապետը վրիպել է: Կիւրիկէն վկայակոչւում է 1246 թուակիր մի արձանագրութեամբ՝ չորս սեղան պատարագով Խորանաշատի Ս. Աստուածածին եկեղեցուն միաբանելու առթիւ⁷⁴: Աղսարթանն ունէր Յովհաննէս անուամբ եղբայր, որը երկու տարի վաւրել է Հաղբատի վանահայրութիւնը: Ապա Աղուանից Ներսէս կաթողիկոսի (1235-1262) կողմից եպիսկոպոս ձեռնադրուելով՝ նշանակուել է «կողմանցն Մաժնաբերդոյ» հոգեւոր առաջնորդ⁷⁵:

Կիւրիկէի մահուան թուականը յայտնի չէ: Գիտենք միայն, որ նա ունեցել է Փահլաւան, Թաղիադին եւ Աղսարթան անուններով որդիներ: Փահլաւանի եւ Աղսարթանի մասին աղբիւրներում տեղեկութիւններ չկան: Ինչ վերաբերում է Թաղիադինին, ապա նա հայ-վրացական հեծեալ իշխանագործի կազմում մասնակցել է մոնղոլների կողմից 1250-ական թուականների երկրորդ կէսին դէպի Բաղդադ եւ Նիփրկերտ ձեռնարկած արշաւանքին, որի ժամանակ ձեռք է բերել սուրբ Բարդղիմէոսի նշխարները: Թաղիադինը դրանք բերել է հայրենիք եւ «եղ ի վանս իւր: Եւ յետոյ հարկեալ ի մեծ իշխանէն Արծրունեաց, որ ասի Սաղուն անուն, ետ նմայ»⁷⁶: Կիւրիկեանների Մաժնաբերդի ճիւղի մեզ յայտնի վերջին ներկայացուցիչն է Աղսարթանի որդի Սարգիսը, որը 1249 թ. իրեն պատկանող Ակուաւաճոր գիւղը վաճառել է Հաղբատի վանահայր Համազասպի եղբայր Գրիգորին⁷⁷: Այս հանգամանքը խօսում է մոնղոլական ծանր տիրապետութեան պայմաններում, ի թիւս այլ հայ իշխանական տների, Մաժնաբերդի Կիւրիկեանների աստիճանական հողազրկման ու տնտեսական քայքայման մասին: Դա, բնականաբար, պէտք է յանգեցնէր պատմական ասպարէզից նրանց հեռանալուն:

Ինչ վերաբերում է Կիւրիկեանների Նոր Բերդի իշխանութեանը, ապա այն Իււանէ Աթաբեկի կողմից ազատագրուելուց եւ Վահրամեանների ենթակայութեան տակ անցնելուց յետոյ բռնել էր տնտեսական վերելքի ուղին: Դրա ապացոյցն է այդ փոքրիկ իշխանութիւնում մեծ ծախսեր պահանջող այնպիսի մեծածաւալ ու փառահեղ վանական համալիրի կառուցումը, ինչպիսին է Նոր Վարագավանքը: Այն այդպէս է կոչուել Վարագի վանահայր տէր Ղուկասի կողմից Վարագայ Ս.

Նշանը 1237 թ. այնտեղ ի պահ տրուելուց յետոյ⁷⁸: Կիւրիկեանների Նոր Բերդի ճիւղի հիմնադիր Վասակի որդի Դաւիթ իշխանը 1193-1220-ական թուականների սկզբներին կառուցեց Նոր Վարազի վանական համալիրի առաջին յուշարձանները՝ Անապատ եկեղեցին եւ դրան հիւսիսային ու հարաւային կողմերից կից մատուռն ու յուղարկաւորումների համար նախատեսուած տոհմական տապանատուներ: Վահրամեանների իշխանութեան հոգեւոր կենտրոն դարձած Նոր Վարազի վանական համալիր կառուցապատումը 1220-ական թուականների կէսերից շարունակեց Դաւիթ որդի Վասակ իշխանը՝ 1237 թ. աւարտելով 1240 թ. օծուած⁷⁹ Ս. Աստուածածին եկեղեցու եւ փոքր գաւթի շինարարութիւնը: Նրա ձեռնարկած մեծ գաւթի կառուցումը շարունակեց եւ արդէն 1261 թ. աւարտին էր հասցրել Վահրամեանների իշխանութեան հոգեւոր առաջնորդ, արքեպիսկոպոս Յովհաննէս Տուեցին, որը վախճանուել է 1263 թ.⁸⁰:

Վասակի որդի Դաւիթը վերջին անգամ յիշատակուած է Անապատ եկեղեցու արեւմտեան պատի 1219 թուակիր մի կրկնազիր արձանագրութեան մէջ: Նա թաղուած է փոքր գաւթում, Անապատ եկեղեցու արեւմտեան մուտքի դիմաց՝ ձախից, իր անունը կրող շքեղ խաչքարի դիմաց, ինչը պարզուած է տառացիորէն վերջերս բացուած նրա տապանաքարի Դաւիթ վիմագրի մեր ընթերցումից: Դաւիթի կին Թամարը թաղուած է նրա ձախակողմում: Թամարի անունը («Խաչս Թամարին է»), որը փորագրուած է Անապատ եկեղեցու արեւմտեան մուտքի երկու կողմերում ագուցուած շքեղ խաչքարերից աջի վրայ (ձախին Դաւիթի անունն է), Ս. Բարխուտարեանն ու Կ. Ղաֆաղարեանը Թամար են կարդացել, իսկ Գ. Սարգսեանը՝ Թա արիւնէ եւ այդ հատ-

ուածները նոյն բառի եզրեր չի համարել⁸¹: Ընդ որում, Կ. Ղաֆաղարեանը Թամարին համարել է այդ խաչքարերի եւ թերեւս Անապատի միւս քանդակների հեղինակը⁸²: Ս. Աւագեանը այդ ընթերցումներն իրաւացիորէն սրբագրել է Թամար եւ եզրակացրել, որ նա եղել է Դաւիթի կինը կամ դուստրը⁸³: Այժմ արդէն, Դաւիթի տապանաքարի հարեւանութեամբ եւ Թամար անունը կրող խաչքարի դիմաց Թամարի տապանաքարի առկայութիւնն ապացուցում է, որ նա եղել է Դաւիթի կինը: Դաւիթի եւ Թամարի որդի Վասակը վերջին անգամ յիշատակուած է 1237 թուակիր մի արձանագրութեան մէջ՝ իբրեւ Անապատ եկեղեցու կառուցող: Հառիճի, Հոռոմոսի եւ Նոր Վարազի արձանագրութիւններից պարզուած է, որ Վասակի կինն է եղել Անիի Հեջուբ Վահրամի դուստր Խաթունը, եւ որ նրանք ժառանգ չեն ունեցել⁸⁴: Դա յանգեցրեց Ժ. Գ. դ. առաջին կէսին Կիւրիկեաններ Նոր Բերդի ճիւղի մարելուն եւ, բնականաբար, նրանց տիրոջթները Վահրամեանների անմիջական տնօրինութեանն անցնելուն:

Այսպիսով, Կիւրիկեանները լիովին դուրս մղուեցին պատմութեան թատերաբեմից, ինչով եւ աւարտուեց Բագրատունեաց փառաւոր տարեգրութեան վերջին էջը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Չնայած հետազոտողների յամառ պրպտումների՝ այս թագաւորութեան ստեղծման ստոյգ թուականը որոշակի չէ:
 2 Հայկական, վրացական եւ արեւելեան աղբիւրները (Մատթէոսի Ուոհայեցոյ ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 145-146, Հաւաքումն պատմութեան վարդապետի լուսաբանեալ, Վեներիկ-Ս. Ղազար, 1862, էջ 101, Լ. Մելիքսեթ-Քէլ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Ա. Երեւան, 1934, էջ 207-208, Օ. Tiran, Turiye Seteuakuari hakkinda resmi vesikabar, Ankara,

1958, էջ 105. Residadin, Cami uttavarih (Seleckular Kismi), Ankara, 1960, էջ 31-32) այս իրադարձութիւնների մասին իրարամերձ տեղեկութիւններ են հաղորդում:
 3 Լ. Մելիքսեթ-Քէլ, Վրաց աղբիւրները ..., հտ. Ա. էջ 208:
 4 Սամուէլի քահանայի Անցելոյ հաւաքումը ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 112:
 5 Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմիչի. Վեներիկ-Ս. Ղազար, 1884, էջ 114, Լ. Մելիքսեթ-Քէլ, Վրաց աղբիւրները ..., հտ. Ա, էջ 208:
 6 Օ. Tiran, էջ 113:
 7 Վարդան վարդապետ, էջ 106, Սամուէլ Անցելի, էջ 118, Մատթէոս Ուոհայեցի, էջ 237, Լ. Մելիքսեթ-Քէլ, Վրաց աղբիւրները..., հտ. Ա, էջ 208:
 8 Սամուէլ Անցելի, էջ 118, Վարդան վարդապետ, էջ 106, Մխիթարայ Այրիվանցոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 75, «Բանքեր մատենադարանի», թիւ 9, Երեւան, 1969, էջ 258:
 9 Վարդան վարդապետ, էջ 119:
 10 Նոյն տեղում, էջ 106. 90:
 11 Նոյն տեղում, էջ 106, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 152:
 12 Նոյն տեղում:
 13 Կիրակոս Գանձակեցի, էջ 106:
 14 Մխիթար Այրիվանցի, էջ 76:
 15 Ա. Արքանասեան, Յովհաննէս Իմաստաւորի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 136:
 16 Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտ. II, Երեւան, 1956, էջ 500:
 17 Նոյն տեղում, էջ 502:
 18 Ստեփաննոս Օրբէլեան, Ժամանակագրութիւն, Երեւան, 1942, էջ 16, «Բանքեր Մատենադարանի», թիւ 9, էջ 258, Մխիթար Այրիվանցի, էջ 77:
 19 Ռ. Ի. Մաթեոսեան, Տաշիր-Ձորագետ (X դ. XIII դ. սկիզբ), Երեւան, 1982, էջ 105-106:
 20 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 21 Վարդան վարդապետ, էջ 106:
 22 Ջուանշէր, էջ 118, Քարթլի Տիւրքերա, հտ. I, Թբիլիսի, 1955, էջ 331-332 (վրացերէն):
 23 Վարդան վարդապետ, էջ 106:
 24 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 25 Հ. Ղեւոնդ Մովսէսեան, Լոռիի Կիրիկեան թագաւորների պատմութիւնը, Վիեննա, 1922, էջ 59:
 26 Ռ. Ի. Մաթեոսեան, Աջ. աշխ., էջ 107:
 27 Վարդան վարդապետ, էջ 119, Պատմութիւն

Վահրամեան Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւննաց. Թիֆլիս. 1910, էջ 379. Քարթլի Տիւրքերա, հտ. I. էջ 344 (վրացերէն) եւ ուրիշներ:
 28 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 351:
 29 Նոյն տեղում:
 30 Հ. Ս. Եսայեան, Ս. Տ. Սաղոմեան, Ա. Ի. Եսայեան, Տաւուշ ամրոցի պեղումները.- ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1991, թիւ 2, էջ 137:
 31 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 32 Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 33 Սամուէլ Անցելի, էջ 133:
 34 Մակար Բարխուտարեանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 327:
 35 Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 36 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 37 Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 38 Կ. Ղաֆաղարեան, Հաղթատ, Երեւան 1963, էջ 183-184:
 39 Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 40 Մանր ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ., հտ. I, էջ 392:
 41 Գրիգոր Ակնցերցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974, էջ 23:
 42 Կիրակոս Գանձակեցի, էջ 152, Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 43 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 44 Մովսէս Կաղանկատուացի, էջ 353:
 45 Տե՛ս նաեւ Հ. Գ. Մարգարեան, Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմութեան մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 43:
 46 Մովսէս Կաղանկատուացի, էջ 356, Վարդան վարդապետ, էջ 126:
 47 Վիմագիրը վկայակոչում ենք մեր հաւաքածոյից:
 48 Կ. Ղաֆաղարեան, Աջ. աշխ., էջ 157, 175:
 49 Կ. Ղաֆաղարեան, Պատմահնագիտական դիտողութիւններ Նոր-Բերդի Կիրիկեան իշխանութեան մասին. - Արմֆանի տեղեկագիր, 1940, թիւ 4-5, էջ 166, 169, 170, Ռ. Մաթեոսեան, Աջ. աշխ., էջ 109, 110:
 50 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 51 Մանր ժամանակագրութիւններ, հտ. II, էջ 502, Ստեփաննոս Օրբէլեան, Ժամանակագրութիւն, էջ 19:
 52 Կիրակոս Գանձակեցի, էջ 152-154, Ստեփաննոս Օրբէլեան, Ժամանակագրութիւն, էջ 19: Ռ. Մաթեոսեանը (Աջ. աշխ., էջ 109) վրիպմամբ Աղսարթանին Աբասի որդեգրած ժառանգն է

- համարել:
- 53 Կ. Ղաֆադարեան, *Պատմահնագիտական դիտողություններ...*, էջ 168:
 - 54 Նոյն տեղում, էջ 166:
 - 55 Կ. Կոստանեան, *Վիմակամ տարեգիր*. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 72:
 - 56 Կ. Ղաֆադարեան, *Պատմահնագիտական դիտողություններ*, էջ 171, 167:
 - 57 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Առաջին, Վեներտիկ-Ս. Ղազար, 1836, էջ 819:
 - 58 Կիրակոս Գանձակեցի, էջ 153:
 - 59 Վարդան վարդապետ, էջ 145, 155:
 - 60 Կիրակոս Գանձակեցի, էջ 152:
 - 61 Նոյն տեղում:
 - 62 Քարթլիս ցխովրեբա, հտ. I, էջ 344:
 - 63 Սամուել Անցեցի, էջ 129:
 - 64 Պ. Մ. Մուրադեան, *Հայաստանի վրացերէն արձանագրությունները*, Երևան, 1977, էջ 119:
 - 65 Ղեոնոյ Մովսէսեան, *Աշխ.*, էջ 75:
 - 66 Վարդան վարդապետ, էջ 101:
 - 67 Ս. Ա. Աւագեան, *Վիմակամ արձանագրությունների բառարանություն*, Երևան, 1978, էջ 319, 322:
 - 68 Ստեփաննոս Օրբելեան, էջ 355:
 - 69 Վերցնում ենք մեր հաւաքածոյից:
 - 70 Ժամանակին այս արձանագրությունների անվանական հետազոտմամբ կարծիք էինք յայտնել (Ա. Ի. Շահնազարեան, *Վահրամեանների իշխանությունը*, Երևան, 1990, էջ 89), որ ի դէմս դրանցից մէկում յիշատակուած Բորիմայի, գործ ունենք Կիրիկէ Բ-ի դատեր հետ, սակայն

- այժմ դժուարանում ենք դա պնդել: Ի դէպ, Կ. Ղաֆադարեանն այդ արձանագրութեան հետ կապուած, առանց աղբիւր վկայակոչելու, գրում է, որ Աղսարթանի որդի Կիրիկէն մինչեւ այժմ յայտնի է միայն 1232 թուի մի արձանագրութեամբ եւ Կիրակոս Գանձակեցու մի վկայութեամբ (նոյն տեղում): Ուրեմն, Կիրիկէն արդէն 1232 թ. հօրը փոխարինած է եղել:
- 71 Կիրակոս Գանձակեցի, էջ 153:
- 72 Նոյն տեղում, էջ 154:
- 73 Նոյն տեղում, էջ 243, Վարդան վարդապետ, էջ 145:
- 74 Կարո Ղաֆադարեան, *Պատմահնագիտական դիտողություններ...*, էջ 175:
- 75 Կիրակոս Գանձակեցի, էջ 99:
- 76 Գրիգոր Ակնեցի, էջ 42-43:
- 77 Կ. Ղաֆադարեան, *Հաղբատ*, էջ 177:
- 78 Կ. Ղաֆադարեան, *Պատմահնագիտական դիտողություններ...*, էջ 171:
- 79 Կիրակոս Գանձակեցի, էջ 153:
- 80 Վարդան վարդապետ, էջ 153-155:
- 81 Մակար Բարխուտարեանց, *Աշխ.*, էջ 141, Կ. Ղաֆադարեան, *Պատմահնագիտական դիտողություններ...*, էջ 169, Գ. Սարգսեան, *Անապատ կամ Նոր Վարագ վանքը եւ նրա վիմագրությունը*. «Էջմիածին», 1952, թիւ 11-12, էջ 28:
- 82 Կ. Ղաֆադարեան, *Պատմագիտական դիտողություններ...*, էջ 169:
- 83 Ս. Ա. Աւագեան, *Աշխ.*, էջ 91-93:
- 84 Կ. Ղաֆադարեան, *Պատմագիտական դիտողություններ...*, էջ 172, Կարապետ Կոստանեանց, *Աշխ.*, էջ 72:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՅԱԲԱՆՈՒՄԸ ԺԹ. ԴԱՐԱՎԵՐՋԻ - Ի. ԴԱՐԱՍԿԶԲԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Վարուժան Պողոսեան

Հայոց ցեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում մեծ աւանդ են ներդրել Ֆրանսիացի պատմաբանները, որոնք աւելի քան մէկ դար եղեռնի պատմագրութիւնը հարստացրել են արժէքաւոր ուսումնասիրութիւններով: Դեռեւս ժԹ. դարի 90-ական թթ. կէսերին սկզբնաւորուած՝ ցեղասպանութեան ֆրանսիական պատմագրութիւնն աւելի քան հարիւր տարի մեծապէս օժանդակել է այս իրադարձութեան պատմութեան համակողմանի ուսումնասիրութեանը, ինչպէս նաեւ իր նպաստն է բերել սկզբնաղբիւրների հրատարակութեան գործին¹: Անշուշտ, այս ասպարէզում պատմագիտական մտքի զարգացումը Ֆրանսիայում հարթ չի ընթացել: Ֆրանսիացի պատմաբանների աւաջին իսկ աշխատութիւններում արտացոլուել են Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան ասպարէզում հետագայում սուր տարակարծութիւնների տեղիք տուած՝ եղեռնի պատմութեան մեկնաբանման հիմնական միտումները՝ սկսած դրա հաւաստումից մինչ պատմական արժանահաւատութեան ժխտումը:

Խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում արեւելեան երկրներում եւրոպական պետութիւնների գաղութատիրական քաղաքականութեան ակտիւացման հետեւանքով Ֆրանսիայում աճում է հետաքրքրութիւնն Արեւելեան Հարցի եւ իբրեւ դրա բաղկացուցիչ մաս՝ Հայկական Հարցի պատմութեան նկատմամբ: Ուստի՝ ժԹ. դարի 90-ական թուականներին Ֆրանսիայում լոյս են տեսնում համիդեան կոտորածների պատմութեանը նուիր-

ուած զանազան բնոյթի՝ պատմագիտական նշանակութեան առումով ոչ համարժէք ուսումնասիրութիւններ, որոնց հեղինակները բողոքի ձայն են վերհանում Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող արեւմտահայութեան բնաջնջման կապակցութեամբ, խստագոյնս խարազանում թրջական կառավարութեան կողմից Հայ ժողովրդի դէմ պետական մակարդակով իրականացուող ցեղասպանութեան քաղաքականութիւնը:

Առ այսօր, սակայն, ժԹ. դարավերջի - Ի. դարասկզբի ֆրանսիական պատմագրութեան թէ՛ նուաճումները եւ թէ՛ ելեւէջները պատմաբանների կողմից քննութեան առարկայ չեն դարձել²: Սոյն յօդուածում կ'անդրադառնանք Հայոց ցեղասպանութեան առաջին փուլի՝ համիդեան կոտորածների պատմութեան լուսաբանմանը նուիրուած՝ իրադարձութիւնների ժամանակակից ֆրանսիացի պատմաբանների աշխատութիւնների քննական վերլուծութեանը, որոնք հրատարակուել են իրադարձութիւնների արշալոյսից ի վեր մինչ երիտթրջական յեղափոխութիւնը³:

Քանի որ մեր կողմից քննարկուող ուսումնասիրութիւնների մի մասը գրուել է Օսմանեան կայսրութեան տարբեր նահանգներ կատարած այցելութիւնների ընթացքում՝ հեղինակների ստացած տպաւորութիւնների հիման վրայ, դրանք, ըստ այդմ, ձեռք են բերում նաեւ սկզբնաղբիւրի նշանակութիւն: Նման բնոյթի ուսումնասիրութիւնների թւում առաւել արժէքաւոր է յայտնի հրապարակախօս